Կին և քաղաքականությունը

Անվճար հավելված

Հատուկ թողարկում 2010

«Իսկ եթե դուք ուսուցիչ լինեիք, կպատժեի՞ք...» հարցին աշակերտների 16%-ը պատասխանել է այո՛:

էջ 4

Իրավունք

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա. 18 տարի Հայաստանում

«Յուրաքանչյուր երեխային առողջություն, կրթություն, հավասար հնարավորություններ և պաշտպանություն»

unicef

Հայաստանը միացավ ու վավերացրեց այս կոնվենցիան 1992-ին, և դա նշանակում է, որ երեխաների իրավունքների պաշտպանության ոգով այսօր չափահաս է դարձել հայ մանուկների մի ամբողջ սերունդ:

ՄԱԿ-ի այս կոնվենցիան միակ միջազգային փաստաթուղթն է, որն ընդունել ու վավերացրել են աշխարհի գրեթե բոլոր երկրները՝ պատասխանատվություն ստանձնելով դրա բոլոր դրույթների իրագործման համար: Կոնվենցիան ամրագրում է 0-18 տարեկան երեխաների կրթության, կյանքի արժանապատիվ մակարդակի, բռնության ու խտրականության բոլոր ձևերից պաշտպանության և այլ իրավունքները:

2006-ին Հայաստանը վավերացրեց Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի երկու կամընտիր արձանագրությունները, ինչպես նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության երկու կոնվենցիաները, որոնք վերաբերում են երեխաների աշխատանքին: Ի դեպ, այսօր Հայաստանում գործում են երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտը կարգավորող շուրջ 40 օրենքներ ու իրավական ակտեր:

ՀՀ-ում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կայքը՝
www.unicef.org/armenia

«Կառուցենք Եվրոպան երեխաների համար և երեխաների հետ»

2010 թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտավ **«Սեռական շահագործումից և սեռական բռնության բռնություններից երեխաների պաշտպանության մասին»** Եվրոպայի խորհրդի կոնվենցիան: Այն ընդունվեց 2007 թ. հոկտեմբերին Իսպանիայի Լանսարոտ քաղաքում: Մինչ այժմ Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետություններից կոնվենցիան չեն ստորագրել միայն վեցը:

Հայաստանը ստորագրել է կոնվենցիան 2001-ի սեպտեմբերի 29-ին և առայժմ չի վավերացրել այն:

Կոնվենցիայում մանրամասն սահմանվել են խնդրի առանցքային հասկացությունները. ի՞նչ է երեխայի նկատմամբ սեռական բռնությունը և մանկական պոռնոգրաֆիան, ի՞նչ պատասխանատվության պետք է ենթարկվեն երեխաների դեմ սեքսուալ հանցագործություններ կատարող անձինք, անկախ այն բանից, որտեղ են դրանք կատարվել՝ դպրոցում, ընտանիքում, տանը, ինչպես նաև ինտերնետով, քանի որ ֆորումների և այլ առցանց սոցիալական կայքերի զարգացման հետ մեկտեղ աճել է երեխաների նկատմամբ սեքսուալ ոտնձգությունների վտանգը:

Իրավաբանական ընթացակարգերի առումով կոնվենցիան պահանջում է լիովին հաշվի առնել երեխաների տրավմատիզմը, երաշխավորել հանցագործությունների զոհերի անվտանգությունն ու գաղտնիությունը, մասնավոր կյանքի և համբավի պաշտպանությունը:

Կոնվենցիայով Եվրոպայի խորհրդի անդամ երկրների օրենսդիրներից պահանջվում է երկարացնել նման կարգի հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետները, որպեսզի նրանց դատավարությունները կարողանան սկսվել զոհի՝ չափահաս դառնալուն պես:

Կոնվենցիայի հայերեն տեքստը Հայաստանում ԵՄ տեղեկատվական գրասենյակի կայքում՝
www.coe.am



...Յուրաքանչյուր չորթվի հետևում կանգնած է առանձին երեխայի կյանք՝ արժեքավոր, բացառիկ և անխզելիորեն կապված այն իրավունքների հետ, որոնք մենք պարտավորվել ենք պաշտպանել: ...Մենք տնօրինում ենք թե՛ գիտելիքներ և թե՛ միջոցներ, որոնց շնորհիվ լավագույն կյանքի հնարավորություններ կարող է ունենալ յուրաքանչյուր երեխա, և մենք պարտավոր ենք օգտվել դրանցից: Հենց սա է մեր կոչումը:

Էնթոնի Լեյք
ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի գործադիր տնօրեն

Երեխաների նկատմամբ սեռական բռնությունը մանկության դեմ հանցագործություն է: Այս չարիքն արմատախիլ անելը պահանջում է ավելին, քան միայն խոսքեր ու խոստումներ: Մեզ անհրաժեշտ են որոշակի միջոցներ նման դեպքերի կանխման, դատապարտման և պատժելու համար, մենք պետք է օգնենք երեխաներին, պաշտպանենք նրանց, արտահայտվելու և վերքերն ամոքելու հնարավորություն տանք: Սա անհրաժեշտ է, սա հնարավոր է և սա հրատապ է:

Մոդ դե Բուր-Բուկիկիո
Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի տեղակալ

«Միավորվենք հանուն երեխաների»

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի բոլորին քաջ հայտնի այս կարգախոսը միավորում է նրանց, ով պատրաստ է ձեռք մեկնելու օգնության կարոտ յուրաքանչյուր երեխային: «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 20-ամյակին նվիրված ՅՈՒՆԻՍԵՖ-ի ամփոփագրի տվյալներով՝ ողջ աշխարհում 500 միլիոնից մինչև 1,5 մլրդ երեխաներ տառապում են դաժան վերաբերմունքի տարբեր ձևերից: Իսկ Եվրոպայի խորհրդի տվյալներով՝ եվրոպական երկրներում յուրաքանչյուր հինգերորդ երեխան դառնում է այս կամ այն ձևի սեռական բռնության զոհ՝ ինցեստ, պոռնոգրաֆիա, մարմնավաճառություն, մարդկանց առևտուր կամ սեքսուալ ոտնձգություն: Ընդ որում, երեխաների նկատմամբ բռնության դեպքերի 90%-ը չի արձանագրվում և ոչ մի վիճակագրության մեջ չի արտացոլվում:

Երբ խոսք է բացվում մեզանում երեխաների նկատմամբ բռնության մասին, մենք սովորաբար ասում ենք, որ Հայաստանում դա անհնար է: Մեզանում երեխաները պաշտամունքի առարկա են՝ համոզված պնդում ենք մենք՝ չխորանալով իրական թվերի ու փաստերի մեջ: Իսկ եթե փորձենք չափել այս պաշտամունքը, չափորոշիչ ընդունելով երեխաներին հատկացվող նպաստները, բազմազավակ ընտանիքի միջին բյուջեն, աղքատության շեմից այն կողմ ապրող երեխաների թիվը, անչափահասների նկատմամբ հանցագործությունների քանակը, նրանց նկատմամբ ֆիզիկական, հոգեբանական, սեռական բռնությունների տարածվածությունը...

Փորձենք հարցնել ծնողներին, կարելի՞ է արդյոք երեխային ծեծել, ու կլսենք, որ հայրական ապտակը դաստիարակության ամենաարդյունավետ եղանակն է... Հարցնենք երեխաներին, թե ուսուցիչներից քանի՞սն են նրանց վիրավորում կամ աջ ու ձախ ապտակներ հասցնում... Մտածենք այն մասին, թե որքան երեխաներ են ընտանեկան բռնության վկա դառնում, երբեմն էլ՝ զոհի կարգավիճակում հայտնվում: Գուցե այդ ժամանակ ի վերջո հասկանանք, որ, ցավոք, մենք դեռ շատ հեռու ենք «երեխայի պաշտամունք»-ից, ու մեր երկրում, գուցե ոչ այնքան մեծ չափերի, քան ավելի մեծ երկրներում, սակայն առկա են երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերը: Տարբերությունը միայն այն է, որ աշխարհում անթաքույց խոսում են արատների մասին և փորձում դրանց դեմ պայքարել, իսկ մենք միայն համառորեն պնդում ենք, որ երեխան մեզանում գերագույն արժեք է՝ ոչինչ չանելով այդ համոզվածությունն իրականություն դարձնելու համար...

Իսկ իրականությունը, ցավոք, շատ ավելի դաժան է, քան մեզ թվում է...

Սյունիքի մարզի Ագարակ քաղաքի բնակիչ Տ. Հ.-ն, ինտիմ հարաբերությունների մեջ գտնվելով Ս. Ն.-ի հետ, նախապես համաձայնության է եկել վերջինիս հետ նրա դստեր՝ անչափահաս Լ-ի նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու մասին: Իրականացնելով իրենց հանցավոր մտադրությունը՝ մայրը ծեծի ենթարկելով դստերը, ուժով հանել է նրա հագուստները, մերկ վիճակում պառկեցրել անկողնում, իսկ Տ. Հ.-ն սեռական բնույթի բռնի գործողություններ է կատարել նրա նկատմամբ...

Երեխա վաճառելու կասկածանքով ոստիկանության Գուգարքի բաժին բերման է ենթարկվել 1984 թ. ծնված Նարինե Զ.-ն: Պարզվել է, որ նա դեռևս հղիության ընթացքում նախնական համաձայնության է եկել Աշիկ Հ.-ի հետ՝ ծննդաբերելուց հետո 1000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով վաճառել իր նորածին երեխային: Ծննդաբերելուց հինգ օր հետո Նարինե Զ.-ն հանձնել է իր նորածին դստերը Վանաձոր քաղաքի մանկատուն...

Ս. Ու.-ն, աշխատելով թիվ 18 հատուկ դպրոցում որպես փոխտնօրեն, օգտագործելով իր պաշտոնեական դիրքը, բռնությամբ ստիպել է դպրոցի սաներին, անչափահասներ՝ 1994 թ. ծնված Լ. Ա.-ին և 1991 թ. ծնված Մ. Բ.-ին, մուրացկանությամբ զբաղվել ու հավաքված գումարների զգալի մասը տալ իրեն: Քրեական գործի հետագա նախաքննության ընթացքում պարզվել է, որ այդ փոխտնօրենը թիվ 18 հատուկ դպրոցի կաթսայատանը նույն դպրոցի աշակերտ՝ 14 տարին չլրացած Ա. Ժ.-ի կամքին հակառակ բռնություն գործադրելով սեքսուալ բնույթի գործողություններ է կատարել նրա նկատմամբ:

Հրազդան քաղաքի ջրմուղ-կոյուղու աշխատող Ռ. Խ.-ն այցելել է հանրակացարանում բնակվող Ն. Մ.-ին, հայտարարել, որ ջրի դիմաց ունեն մեծ պարտքեր, նաև հայտնել, որ հավանել է նրա դստերը՝ 12-ամյա Ն.-ին, և ցանկանում է ամուսնանալ նրա հետ: Մի քանի օր հետո ջրմուղի աշխատողը դարձյալ այցելել է Ն. Մ.-ին, նրա և դստեր հետ օգտագործել են ալկոհոլ, որից հետո սեռական հարաբերություն է ունեցել ալկոհոլի ազդեցության տակ գտնվող աղջնակի հետ՝ իբր վերջինիս համաձայնությամբ:

Սրանք իրավապահ մարմիններին հայտնի դարձած դաժան մանկական ճակատագրերի մասին ընդամենը մի քանի պատմություններ են...

Մտորելու առիթ է տալիս այս կարգի հանցագործությունների դինամիկան, որը տարեցտարի աճում է: Դրանում ոչ վերջին դերը խաղում է նաև այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով (141-րդ և 142-րդ՝ անչափահասների նկատմամբ անառակաբարո գործողություններ) նախատեսված պատիժներն անհամարժեք են կատարած արարքներին: Ի հետևանս՝ ինչպես ցույց է տալիս դատական պրակտիկան, օրենքի սողանցքը բավական լայնորեն օգտագործվում է, և շատ ավելի լուրջ հանցագործությունների մեծ մասը որակվում է հենց այս հոդվածներով: Ըստ վիճակագրության՝ առավել տարածված պատիժը նման դեպքերում տուգանքներն են, էլ չենք ասում նախնական բողոքներից զոհերի հրաժարվելու ընդունված պրակտիկայի մասին...

Այսօր ոչ միայն մասնագետների, այլև շարքային քաղաքացիների համար ակնհայտ է դարձել, որ հարկ է օրենսդրական կարգով ուժեղացնել անչափահասների պաշտպանությունը սեռական բնույթի ոտնձգություններից: Այդուհանդերձ, հասկանալի է, որ միայն պատժաչափը խստացնելով խնդիրը չես վերացնի: Այդ հանցագործությունները չեն նվազի, քանի դեռ հասարակությունը ներողամիտ է նրանց նկատմամբ, քանի դեռ չի գիտակցում յուրաքանչյուր տրորված մանկան հոգու, յուրաքանչյուր երեխայի քայքայված առողջության, յուրաքանչյուր փոքրիկի երազանքների փլուզման արժեքը: Ուրեմն, եկեք միավորվենք հանուն երեխաների...

Թամարա Հովնաթանյան

Ուշադրություն

Եվրոպայի խորհուրդը հայտարարել է «Ընդդեմ երեխաների նկատմամբ բռնության» քարոզարշավ

2010 թ. նոյեմբերի 29-ին սկսվեց Եվրոպայի խորհրդի տեղեկատվական-քարոզչական արշավը երեխաների նկատմամբ սեռական բռնության անթույլատրելիության մասին՝ նախատեսված 47 անդամ երկրների իշխանությունների, լայն հասարակայնության և պրոֆեսիոնալների համար:

Արշավի նպատակն է քանդել երեխաների տառապանքները թաքցնող և հանցագործներին պարտակող լռության պատերը:

Նշենք, որ Եվրոպայի խորհրդի մեկ այլ՝ 2007-ին հայտարարված քարոզարշավն ուղղված էր երեխաների նկատմամբ մարմնական պատիժների արգելմանը:

Իսկ 2009-ին հրապարակված ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հետազոտությունը Երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ սահմանել է մարմնական պատիժների արգելումը որպես համաշխարհային նպատակ:

ԵՄ արշավի կայքէջը՝
http://www.coe.int/t/dg3/children/1in5/default_en.asp

SOS

Հայաստանի գրեթե ամեն երկրորդ երեխան ապրում է աղքատության մեջ

Հայաստանում երեխաների 38,1%-ն աղքատ է, իսկ 4,5%-ը՝ ծայրահեղ աղքատ: Դրա մասին են վկայում ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության օրերս հրապարակված ուսումնասիրության տվյալները:

Երեխայի աղքատ լինելու ռիսկն ավելի բարձր է, եթե նա ապրում է բազմազավակ ընտանիքում, ծնողները միջնակարգ կամ ավելի ցածր կրթություն ունեն, ծնողները գործազուրկ են, ընտանիքում կան հաշմանդամ երեխաներ, կամ ծնողներն ամուսնալուծված են: Ընդ որում, Հայաստանում հաշմանդամություն ունեցող երեխաներից 70%-ը աղքատ է, և 13%-ը՝ ծայրահեղ աղքատ:

«Մանկական աղքատության մասին նոր տվյալները չափազանց մտահոգիչ են: Ակնհայտ է, որ տնտեսական և ֆինանսական ճգնաժամից առավելագույնը տուժել են երեխաները: Այս իրավիճակը կարող է երկարաժամկետ հետևանքներ ունենալ թե՛ երեխաների, որոնք կարող են զրկվել իրենց հիմնական իրավունքներից, և թե՛ երկրի ընդհանուր զարգացման վրա»,- իր մտահոգությունն է արտահայտում ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ տկն Լեյլի Մոշիրին:

Նրանք սովորելու փոխարեն աշխատում են

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի նախաձեռնությամբ անցկացված անչափահասների աշխատանքի վերաբերյալ հետազոտության տվյալներով՝ հանրապետության 11 մարզերում 1066 հարցված ընտանիքների 3,6%-ը խոստովանել է, որ դպրոցական տարիքի իրենց երեխաները, հիմնականում 7-14 տարեկան, աշխատում են:

Ընդ որում, այս թիվը վերաբերում է միայն այն երեխաներին, ովքեր իրենց աշխատանքի դիմաց վարձատրվում են ու չի ներառում նրանց, ովքեր թողնում են դպրոցը ծնողներին օգնելու համար՝ աշխատելով դաշտում կամ տանը: Ակնհայտ է, որ սովորելու փոխարեն աշխատող երեխաները, պատշաճ կրթություն և մասնագիտություն չստանալով, վաղը համալրելու են հանրապետության աղքատ բնակչության բանակը:

Երեխաների թրաֆիքինգ

«Նրանք ինձ ստիպում էին վատ բաներ անել»...

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը կից թրաֆիքինգի դեմ պայքարի ռեսուրսային և աջակցության կենտրոնի տվյալներով՝ անցյալ տարի բացահայտված երեխաների թրաֆիքինգի 3 դեպքերից տուժել է 8 անչափահաս, որոնցից մեկը ենթարկվել է սեռական շահագործման, 7-ը՝ հարկադիր աշխատանքի: Երեխաներին ստիպել էին մուրացկանությամբ զբաղվել, իսկ 17 տարեկան աղջկան հարկադրել են սեռական ծառայություններ մատուցել: Մեղավորները դատապարտվել են 7 տարի ազատազրկման: Այս տարի երեխաների թրաֆիքինգի դեպքեր դեռևս չեն բացահայտվել:

ՀՕՖ-ի Երեխաների աջակցության կենտրոնի տնօրեն Միրա Անտոնյանը նշում է, որ շատ հաճախ դժվար է լինում որակել՝ թրաֆիքի՞նգ է տվյալ դեպքը, թե՞ ոչ:

- Այս տարի մենք ահազանգել ենք չորս դեպքի մասին, որոնք, մեր կարծիքով, կասկածելի էին թրաֆիքինգի տեսանկյունից: Ու մինչև վերջ այդպես էլ չհասկացանք, քանի որ քննությունը դեռ ընթանում է, և թե ի՛նչ կլինի հետո, մենք չգիտենք: Ընդհանուր առմամբ ավելի շատ են աշխատանքային շահագործման դեպքերը, երբ երեխաներն աշխատում են երկար ժամանակ, օրինակ՝ կարտոֆիլ են հավաքում ամբողջ օրը և վերջում ստանում մեկ դույլ կարտոֆիլ, սա որակվում է երեխայի աշխատուժի շահագործում:

Քիչ չեն նաև մուրացկանության փաստերը երեխաների շրջանում. այս երևույթը կարող է որպես թրաֆիքինգ համարվել:

- Եթե երեխան իր կամքով է գնում մուրացկանության և տնօրինում է նաև գոյացած գումարը, ապա սա թրաֆիքինգ չի դիտվում, սակայն եթե նրան ստիպողաբար են ուղարկում, գումարն էլ ձեռքից խլում են կամ անգամ տալիս են շատ փոքր բաժինը, ապա սա թրաֆիքինգ է,- նշում է Միրա Անտոնյանը: - Նրա խոսքով՝ մինչև 2008 թ. սա կոչվում էր երեխային հակասոցիալական արարքի մղում, և դրա համար 2-3 տարի էր տրվում, իսկ հիմա արարքը դիտվում է որպես թրաֆիքինգ և առնվազն 7 տարի է հասնում:

Լիլիթ Քոչինյան

«Երեխաների թրաֆիքինգը և շահագործումը Հայաստանում» հետազոտության տվյալներով՝ հարցվածների 86,7%-ը լսել է թրաֆիքինգի մասին, մինչդեռ երեխաների 51,5%-ը, իսկ այդ երևույթի դրսևորումների հետ բախվել է հարցված չափահասների միայն 1,8%-ը, իսկ երեխաների 4,9%-ը:

Հետազոտությունն անցկացվել է 2009-ին 1200 տնտեսություններում, հարցմանը մասնակցել են 5 մարզերի 800 երեխաներ:

Ավելի շատ իրազեկ են աղջիկները, քան տղաները, ունևոր ընտանիքները ոչ ունևոր ընտանիքներից ավելի են տեղեկացված թրաֆիքինգի մասին:

Հարցված ծնողների զգալի մասը՝ 60%-ից ավելին, համաձայն է իր երեխաներին ուղարկել փող աշխատելու իրենց բնակավայրից հեռու, միայն թե լավ աշխատավարձ և նորմալ պայմաններ լինեն: Իսկ հարցված երեխաներից կեսից ավելին պատրաստ է աշխատել ցանկացած պայմաններում, այդ թվում՝ դրսում, եթե ընտանիքը կարիքի մեջ գտնվի: Այսինքն՝ երեխաները կամովին կարող են հայտնվել անբարենպաստ աշխատանքի ռիսկի կամ թրաֆիքինգի խմբում:

Ծրագիրը հովանավորել են Եվրոպական միությունը և Չեխիայի կառավարությունը: Հետազոտությունն իրականացրել է «Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների հայաստանյան ասոցիացիան՝ Հայ օգնության միության, People in need, «Հույս և օգնություն» ՀԿ-ների հետ համատեղ, Երևանում և ՀՀ տասը մարզերի 17 քաղաքներում:

Այցելեք նաև այս ծրագրի շրջանակներում պատրաստված կայքը՝ www. stopchildtraffiking.am

«14-ամյա Տ.-ն աշխատում է ծնողների փոխարեն, նրա աշխատածը ծախսվում է ծնողների հարբեցողության վրա: Ամբողջ օրը զբաղվում է անասնապահությամբ, հողագործությամբ, դպրոց չի հաճախում: Իսկ երբ փորձում է ընդդիմանալ, նրան ծեծում են...

***

Երբ փոքր էի, մայրս մահացավ, և հայրս հրաժարվեց ինձանից, որպեսզի ամուսնանա ուրիշի հետ: Նրանք ինձ դուրս շպրտեցին: Ես ապրում էի քեռուս ընտանիքի հետ: Քեռիս ինձ ստիպում էր, որ փող հավաքեմ փողոցում: Ասում էր՝ եթե փող չբերես, տուն չգաս...

***

Կ.-ն 12 տարեկան է: Նրա կենսաբանական մայրը զբաղվում է մարմնավաճառությամբ և երեխայի ծնունդից հետո թողնում է նրան ընկերուհու մոտ, որպեսզի կարողանա աշխատել: Կ.-ն որպես մայր ճանաչում է Ս.-ին՝ մոր ընկերուհուն, որը, ինչպես նշում է երեխան, նրան շարունակ ուղարկում էր մուրացկանության. «Ես օրական 500 դրամ էի հավաքում, բերում, տալիս էի իրեն, եթե չբերեի, ինքը և իր մարդը՝ Գ.-ն, ծեծում էին ինձ»,- նշում է Կ-ն: Երեխայի խոսքով՝ Ս.-ն և նրա ամուսինը ստիպել են նրան զբաղվել օրալ սեքսով: «Նրանք ինձ ստիպում էին վատ բաներ անել... մեծ մարդկանց հետ, որոնք ինձ դրա համար 200 դրամ փող էին տալիս: Մի մարդ կար, որ ավտո ուներ, գալիս էր, ինձ վերցնում էր, տանում էր մի տեղ և ստիպում էր, որ այդպիսի բաներ անեմ,- հիշում է Կ-ն: - Ես այդ մասին ոչ մեկին չէի պատմում, որովհետև այդ մարդը սպառնացել էր սպանել ինձ, եթե պատմեմ: Իսկ հիմա պատմում եմ, որովհետև նա հիմա Ռուսաստան է գնացել...

Երեխաների վկայություններից

Իրավական դաշտ

Խստացվում է երեխաների թրաֆիքինգի համար պատիժը

Ազգային ժողովի այս տարվա աշնանային նստաշրջանում պատգամավորները երկրորդ ընթերցմամբ քննարկեցին ՀՀ կառավարության ներկայացրած ՀՀ քրեական օրենսգրքում լրացումների մասին օրինագիծը, որի համաձայն խստացվում են երեխաների առևտրին ու շահագործմանը, երեխաների թրաֆիքինգին, երեխաներին մարմնավաճառության մեջ ներգրավելուն կամ պոռնոգրաֆիկ նյութեր պատրաստելուն վերաբերող մի շարք հոդվածներով նախատեսված պատժաչափերը:

Թվերից այն կողմ

Խաթարված մանկության ամփոփագրերից...

ՀՀ գլխավոր դատախազության 2009-ի «Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների մասին» տեղեկանքի տվյալներով.

...2008 թ. ընթացքում արձանագրվել է սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների գրեթե կրկնակի աճ՝ 2007 թ.՝ 33 դեպք, իսկ 2008-ին՝ 63 դեպք, ընդ որում՝ դա ամենաբարձր ցուցանիշն է 2004 թվականից սկսած:

Գրանցված 63 դեպքերից տուժել են 63 անձ, որոնցից 50-ը կամ 79%-ը անչափահասներ են:

Արձանագրված 63 հանցագործության դեպքերից 34-ը կազմում են ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով նախատեսված՝ 16 տարին չլրացած անձի հետ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու դեպքերը:

Ընդ որում՝ այս բնույթի դեպքերը նախորդ տարվա համեմատությամբ աճել են 53%-ով և վերջին 5 տարիների ամենաբարձր ցուցանիշներն ունեն:

ՀՀ ոստիկանության տվյալներով.

...2010 թ. տասն ամիսների ընթացքում գրանցվել է սեռական բնույթի բռնության 38 դեպք անչափահասների նկատմամբ, այդ թվում՝ բռնաբարության մեկ դեպք, սեքսուալ ոտնձգության 6 դեպք և սեքսուալ բնույթի գործողություն կատարելու 31 դեպք 16 տարին չլրացած անձանց հետ:

Իմ զրուցակից՝ Հայաստանի ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի տեղակալ, գնդապետ Նելլի Դուրյանը անչափահասների խնդիրներով զբաղվում է 1996 թվականից: Նրա ներկայացրած վիճակագրական տվյալները կարծես երկու տարբեր բևեռների են բաժանված: Մի կողմում՝ անչափահասների կողմից կատարված հանցագործություններ, մյուս կողմում՝ երեխաների նկատմամբ բռնության դեպքեր: Սակայն երկու բևեռում էլ մեր՝ հայ երեխաների խեղված ճակատագրեր են՝ ասում է նա:

... Այս տարվա առաջին տասն ամիսների ընթացքում գրանցվել է անչափահասների կատարած հանցագործությունների մի փոքր նվազում՝ 2010 թ. 390 դեպք, իսկ 2009-ի նույն ժամանակահատվածում՝ 411 դեպք, ասում է Նելլի Դուրյանը: *«Անչափահասների կատարած հանցագործությունների հիմնական տեսակը գողությունն է, ընդ որում՝ մանր գողությունը»,*- նկատում է նա՝ ընդգծելով, որ դրա հետ մեկտեղ անչափահասները սկսել են ավելի հաճախ իրենց մոտ տարբեր կարգի սառը զենք, կտրող-ծակող առարկաներ ունենալ:

Անհանգստացնող է ինքնասպանությունների վիճակագրությունը՝ 2010 թ. առաջին տասն ամիսների ընթացքում 38 ինքնասպանության փորձ է կատարվել, որոնցից 13-ը՝ մահվան ելքով: Անցյալ տարվա նույն ժամանակաշրջանում կատարվել է 23 փորձ: *«Ինքնասպանության փորձ են կատարում տարբեր սոցիալական շերտերի երեխաներ: Պատճառները խիստ տարբեր են՝ ընտանեկան վեճեր, ծնողների հետ տարաձայնություններ, անպատասխան սեր»,*- ասում է Ն.Դուրյանը՝ հավելելով, որ ինքնասպանության ավելի հաճախ դիմում են աղջիկները:

Ինչ վերաբերում է անչափահասների նկատմամբ բռնությանը, ապա մեկ տարվա կտրվածքով սովորաբար գրանցվող 110 դեպքերի համեմատ այս տարի արդեն արձանագրվել է 140 դեպք: *«Ունենք նաև անչափահասների առևանգման 5 դեպքեր, այդ թվում՝ ամուսնության նպատակով,*- նշում է նա:

«Բռնությունների առումով առաջին տեղում ֆիզիկական բռնություններն են, հետո՝ սեռական: Ընդ որում, սեքսուալ բռնությունը մեր մտածելակերպի պատճառով լռության է մատնվում, հաճախ նաև՝ ծնողների կողմից: Լռում են՝ վախենալով շրջապատի պարսավանքից»,- ասում է նա՝ կոչ անելով յուրաքանչյուր նման դեպքում անհապաղ դիմել համապատասխան մարմիններ, քանի որ հասարակության ուշադրությունը հրավիրելու և, գլխավորը, մեղավորներին պատժելու այլ եղանակ չկա:

Պատասխանելով ոստիկանության կողմից ձեռնարկվող կանխարգելիչ միջոցների մասին հարցին՝ իմ զրուցակիցն անդրադարձավ փորձնական մի ծրագրի, որի շրջանակներում Երևանի 11 դպրոցներին կցված են ոստիկանության ներկայացուցիչներ՝ տեսուչներ, ովքեր ուշի ուշով հետևում են, թե ինչ է կատարվում դպրոցում:

«Նրանք տեղյակ են բոլոր խնդիրներին, վստահելի հարաբերությունների մեջ են երեխաների և ուսուցիչների հետ: Եթե այս՝ առայժմ մեկամյա ծրագրի արդյունքները հաջող լինեն (իսկ դրական արձագանքներ արդեն իսկ կան), ապա մենք այն կներդնենք բոլոր ուսումնական հաստատություններում: Ճիշտ է՝ մի խնդիր կա. համապատասխան կադրերը քիչ են, անհրաժեշտ են լրացուցիչ հաստիքներ...»

Զրուցեց Աննա Սաթյանը

Դիմակայություն

«Սադի՛ստ, հեռո՛ւ մնա երեխաներից»

Այս գրությամբ պաստառը Մարիամ Սուխուդյանը, որը ժամանակին առաջինը բարձրաձայնեց հատուկ դպրոցում տիրող անմխիթար վիճակի մասին, պատրաստել է Նուբարաշենի թիվ 11 հատուկ դպրոցի նախկին տնօրեն Մերուժան Ենգիբարյանի համար:

Այսօր այդ տնօրենը ցանկանում է վերականգնվել իր պաշտոնում և հայց է ներկայացրել վարչական դատարան՝ բողոքարկելով կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի հրամանը, որով դադարեցվել են իր լիազորությունները: Արդեն մեկ դատական նիստ կայացել է սույն գործով: Զավեշտն այն է, որ Մերուժան Ենգիբարյանի փաստաբանի խոսքով՝ իրենք վիճարկում են ոչ թե տնօրենի վարքը, այլ հրամանի իրավական հիմքը:

«*Անթույլատրելի է, որ նման մարդը վերադառնա դպրոց: Նախկին սաներն իրենց ցուցմունքներում պատմել են նրա սադիստությունների ու ծեծերի մասին, բացի այդ՝ Ենգիբարյանը տեղյակ է եղել, որ ուսուցիչ Լևոն Ավագյանը պղծել է երեխաներին*»,- լրագրողների հետ զրույցում ասաց Մարիամ Սուխուդյանը: Նա նշեց, որ պատրաստ է իր ունեցած տեղեկությունները տրամադրել նախարարությանը, որպեսզի վերջինս ավելի ուժեղ դիրքերից հանդես գա որպես պատասխանող կողմ:

Բռնության ենթարկված աղջիկը կարող է փոխհատուցում պահանջել

Նուբարաշենի թիվ 11 հատուկ դպրոցի նախկին սան 18-ամյա Հ.Ս.-ն բռնության ենթարկված երեխաներից միակն էր, ով բողոքարկեց ընդհանուր իրավասության դատարանի վճիռը այս աղմկահարույց գործով՝ համարելով, որ անառակաբարո գործողությունների համար դատապարտված ուսուցչի համար սահմանված 2 տարի ազատազրկումը բավարար պատիժ չէ: Վերաքննիչ քրեական դատարանը մասամբ բավարարեց նրա պահանջը՝ ուսուցիչ Լևոն Ավագյանի պատժաչափը դարձնելով 3 տարվա ազատազրկում: Հ.Ս.-ն սակայն չբավարարվեց այդքանով և վճռաբեկ բողոք ներկայացրեց, որը, սակայն, վարույթ չընդունվեց: Բռնության ենթարկված աղջկա ներկայացուցիչ փաստաբան Տիգրան Հայրապետյանը մեզ հետ զրույցում նշեց, որ հնարավոր է՝ իրենք հայց ներկայացնեն Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ բարոյական վնասի փոխհատուցում ստանալու համար. «Այս հարցը դեռ պետք է քննարկեմ Հ.Ս.-ի հետ, եթե նա ցանկանա, մենք կդիմենք Եվրոպական դատարան»,- ասաց փաստաբանը:

Հիշեցնենք, որ տարիներ շարունակ հատուկ դպրոցում հայոց լեզու և գրականություն դասավանդած ուսուցիչը սեռական բռնությունների է ենթարկել անչափահաս սաներին: 2010 թ. ամռանը նա մեղավոր ճանաչվեց ՀՀ քր. օր.-ի 142-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասի հատկանիշներով՝ «անառակաբարո գործողություններ մեկից ավելի անչափահասների նկատմամբ»:

«Տեր Թոդիկի դպրոցի մասին լսե՞լ եք. դա փա՛ռք էր մեր դպրոցի համեմատ»...

Դատի ժամանակ տուժող ճանաչված աղջիկների ներկայացուցիչներ Տիգրան Հայրապետյանն ու Ավագ Լալայանն իրենց ճառերում նշեցին, որ գործով ապացուցված է Լևոն Ավագյանի ոչ միայն անառակաբարո գործողություններ կատարելը, այլև նրա կողմից երեխաներին ծեծի և խոշտանգումների ենթարկելը, ուստի նրա մեղադրանքին պետք է ավելացվեն Քր. օր.-ի ևս երկու հոդվածներ: Դատարանի դահլիճում հնչած դպրոցի նախկին սաների վկայություններից պարզ դարձավ նաև, որ դպրոցի տնօրեն Մերուժան Ենգիբարյանը նույնպես ծեծել և խոշտանգել է երեխաներին:

«Ինչ վերաբերում է տնօրեն Ենգիբարյանին, առաջին դասարանից մինչև ավարտելը, նա առանց պատճառի, որտեղ որ պատահեր՝ ինչպես ննջասենյակում, այնպես էլ դասի ժամանակ, ծեծում էր ինձ: Եթե Ենգիբարյանը երեխա չէր ծեծում, ձեռքերը դողում էին…Հրեշ Ենգիբարյանը մեզ՝ մի քանի հոգու, կանգնացնում էր պատի տակ և ինչքան ուժ ուներ հարվածում էր մեր փորին, մենք ընկնում էինք…»

«Դու ներում չունես: Էդ դպրոց չի եղել մեր համար, համակենտրոնացման ճամբար է եղել: Ես մինչև հիմա չեմ մոռացել քո ծեծերը: Ամեն ինչ եղել է՝ ծեծ էլ, բռնություն էլ, բռնաբարություն էլ: Մինչև հիմա ես երիկամների ցավ ունեմ: Քո կողքին պետք է նստեր նաև տնօրենը՝ Մերուժան Ենգիբարյանը, նա քեզանից էլ դաժան էր»:

«Պարզվում է՝ տարիների ընթացքում Լևոն Ավագյանն ավելի է կատարելագործվել: Ես ավարտել եմ 1990 թ., մեր ժամանակ ավելի շատ ծեծում էր: Անձամբ ինձ և՛ ծեծել է, և՛ ոտնձգություններ կատարել իմ նկատմամբ: Տեր Թոդիկի դպրոցի մասին լսե՞լ եք. դա փա՛ռք էր մեր դպրոցի համեմատ: Նրանք այդքան դաժան վարվում էին անպաշտպան, շատ դեպքերում՝ հիվանդ երեխաների հետ, որոնք որևէ մեկին չէին կարող բողոքել դպրոցում տիրող իրավիճակի մասին»:

«Ամառային արձակուրդներին, երբ մեր աղջիկներին ճամբար էին ուղարկում, այնտեղ նրանց ծեծում և բռնաբարում էին: Մեզ հետ թուրքից վատ են վարվել: Լևոն Ավագյանն էլ, Մերուժան Ենգիբարյանն էլ պետք է ամենախիստ ձևով պատժվեն»:

«Ենգիբարյանն ու Ավագյանն ինձ ծեծում էին քացով, բոքսով (բռունցքներով), ես մինչև օրս գլխացավեր ունեմ»:

«Դուք էնտեղ չեք եղել, էդ ծեծ ու ջարդը չեք տեսել, հենց ցեղասպանություն են ասում, ես իմ մանկությունն եմ հիշում»:

«Ես ասեցի, որ Ավագյանը աղջիկներին ձեռ ա գցել, ինքը ասեց՝ Ավագյանը եքա մարդ ա, տենց բան հնարավոր չի: Հետո էլ ասեց, որ եթե շուխուր անեմ, գլուխս կջարդի: Ես ել փախա դպրոցից»…

Դպրոցի սաների վկայություններից

Փորձագետի կարծիք

Տուժած երեխաները կրկնակի զոհ դարձան

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (ՅՈՒՆԻՍԵՖ) զեկույց է պատրաստել «Հայաստանում երեխաների սեռական շահագործման կանխարգելման և դադարեցման օրենսդրական և գործնական բացերը» թեմայով, որը վերլուծում է բռնության ենթարկված երեխաների նկատմամբ պաշտպանության միջոցների բացերը՝ համեմատելով այն միջազգային փորձի հետ: Զեկույցը նաև անդրադառնում է Նուբարաշենի թիվ 11 հատուկ դպրոցի նախկին սաների նկատմամբ տեղի ունեցած բռնությունների դեպքի առնչությամբ հարուցված քրեական գործի նախաքննությանն ու դատաքննությանը:

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի ազգային փորձագետ Սիրանուշ Սահակյանը մեզ հետ զրույցում իր փորձագիտական գնահատականը տվեց տեղի ունեցածին.

«Մենք ունեցանք մի եզակի դեպք, որի մասին բարձրաձայնվեց, բայց քննիչները ոչ միայն փորձեցին ոչ օբյեկտիվ քննություն անցկացնել, այլև բարձրաձայնողի նկատմամբ ճնշում գործադրվեց: Հետագայում լրացուցիչ գործոններ են ազդել, որ քննիչներն իրենց վերաբերմունքը փոխեն: Այս քրեական գործի քննության շրջանակներում տուժածներն անպաշտպան են եղել. անչափահասները նախաքննության ընթացքում իրենց նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի արդյունքում կրկնակի զոհ են դարձել: Բռնության ենթարկված աղջիկների անունները հրապարակվել են, բացի այդ, անընդմեջ ճնշումներ են գործադրվել, որ վերաքննիչ բողոք չներկայացնի տուժողը: Ամեն ինչ այնպես է կատարվել, որ մեծացվել է երեխաներին հասցված վնասի չափը: Ընդհանուր առմամբ տեղի ունեցավ հետևյալը. մենք երեխաների շահերը պաշտպանելու նկատառումով կրկին ոտնահարեցինք նրանց շահերը, որպեսզի հասնենք նրան, որ Լևոն Ավագյանին դատապարտեն»:

Իրավիճակն ուսումնասիրած փորձագետները մի շարք առաջարկություններ են ներկայացնում, այդ թվում՝ ՀՀ քր. օր.-ի 142-րդ հոդվածը («Անառակաբարո գործողություններ») փոփոխելու վերաբերյալ: Զեկույցում խորհուրդ է տրվում ոչ միայն խստացնել պատժաչափն այս հոդվածով (այժմ նվազագույնը՝ տուգանք է նվազագույն աշխատավարձի 200-400-ապատիկի չափով, առավելագույնը՝ ազատազրկում առավելագույնը երեք տարի ժամկետով), այլև հաշվի առնելով հանցագործություն կատարած անձի գործողություններից տուժածների թիվը և տարիքային խումբը: «Գործող օրենքում հաշվի չեն առնված՝ զոհը մե՞կ հոգի է, թե՞ հարյուր, մինչև յո՞թ տարեկան է, թե՞ ավելի մեծ: Պատժաչափը պետք է հաշվարկել՝ ելնելով այս առանձնահատկություններից»,- ասում է Սիրանուշ Սահակյանը:

Նյութերը պատրաստեց Արման Ղարիբյանը

Հ.Գ. Նշված հոդվածների պատժաչափը խստացնելու անհրաժեշտության հետ համաձայնեցին նաև մեզ հետ զրուցած հայ օրենսդիրների մեծ մասը: Սակայն Աժ ոչ մի խմբակցություն կամ պատգամավոր դեռևս հանդես չի եկել նման նախաձեռնությամբ:

Փակ դռների հետևում

Մենք ասում ենք, որ երեխան մեզ համար գերագույն արժեք է...

Թվում է՝ երեխաների համար ամենաանվտանգ տեղը սեփական տունն ու ընտանիքն է: Սակայն փաստերը հաճախ այլ բան են վկայում. տունը կարող է նաև լինել այն վայրը, որտեղ երեխան դառնում է մեծահասակների ագրեսիվ վարքագծի զոհ կամ ականատես հարազատ մոր նկատմամբ ընտանեկան բռնությանը: Այս մասին է մեր զրույցը «Արևամանուկ» երեխաների և ընտանիքի խնամքի հիմնադրամի ղեկավար, հոգեբան Արմինե Գնյուր-Կարապետյանի հետ:

- Ցավոք, հայ ընտանիքներում նույնպես նկատվում են երեխաների հետ դաժան վերաբերմունքի դեպքեր: Ընդ որում, գոյություն ունի թե ֆիզիկական և թե հոգեբանական բռնություն: Հաճախ ֆիզիկական բռնությունը կապված է զայրույթն ու դյուրաբորբոքությունը կառավարելու ծնողների անկարողության հետ, ընդ որում այն տարածված է ոչ միայն աղքատ ու ոչ լիարժեք ընտանիքներում, որոնք կազմում են ռիսկի խումբը, այլև առավել ապահովված ընտանիքներում: Պակաս անընդունելի են հոգեբանական բռնության դրսևորումները՝ երեխային շարունակ վիրավորելը, նրա մարդկային արժանապատվությունը նվաստացնելը, մեղադրելը մի բանում, որում ինքը մեղավոր չէ, կամ էլ երեխային այնպիսի պահանջներ ներկայացնելը, որոնք չեն համապատասխանում նրա տարիքային հնարավորություններին և այլն:

- Սակայն չէ՞ որ լինում են դեպքեր, երբ երեխաներն իրենք են բռնության դրդում...

- Դա ծնողներն են ասում, որ երեխաները նրանց դրդում են բռնության: Այդ կերպ մեծահասակները փորձում են արդարացնել իրենց բացասական վարքագիծը երեխայի վարքագծով: Սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ նույնիսկ այն ժամանակ, երբ երեխաները ամեն կերպ ձգտում են հաճոյանալ ծնողին, վերջինը այնուամենայնիվ գտնում է ագրեսիայի դիմելու պատրվակ: Իր հերթին՝ տարբեր կարգի բռնության ենթարկվող երեխաներն իրենք են զայրույթի և ագրեսիայի պոռթկումներ ունենում՝ թափելով այն առավել թույլերի վրա՝ տարիքով ավելի փոքր երեխաների, կենդանիների...

- Ստացվում է՝ դեռահասների ագրեսիվության և այսպես կոչված «բուլինգի» ակունքները պետք է փնտրել ընտանիքո՞ւմ:

- Բուլինգի խնդիրը գոյություն է ունեցել բոլոր ժամանակներում, բոլոր դպրոցներում, ցանկացած երիտասարդության շրջանում: Նախկինում սա պարզապես կենցաղային հասկացություն էր, սակայն վերջին 20 տարիներին դպրոցական բուլինգը դիտարկվում է որպես լուրջ սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր: Բուլինգի հետևում հաճախ կանգնած են սոցիալ-տնտեսական գործոններ, օրինակ՝ նյութական ապահովությունը, սոցիալական կամ էթնիկ անհավասարությունը: Ինչպես ցանկացած բարդ երևույթ՝ բուլինգը չունի ոչ միանշանակ բացատրություն, ոչ հաղթահարման ու կանխման լիակատար միջոցներ: Ինչո՞ւ են որոշ մարդիկ ծաղրում կամ նեղում մյուսներին: Համարվում է, որ կռվարարները ուժ ցուցադրելով են ինքնահաստատվում, բարձրացնում իրենց հեղինակությունը հասակակիցների շրջանում: Իրականում նրանցից շատերը իրենց տան իրավիճակը վերարտադրում են դպրոցում. ինչպես է տանը վարվում հայրը կամ ավագ եղբայրը իր նկատմամբ, նույն կերպ էլ նա է իրեն պահում ավելի թույլ ու հնազանդ դասընկերների հետ:

- Գաղտնիք չէ, որ այսօր այդ խնդիրը ստանում է ավելի դաժան դրսևորումներ:

- Այո՛, և մեր պրակտիկայում պատահում են նման դեպքեր: Օրինակ՝ մայրն իր որդուն հապճեպ տեղափոխելով մի դպրոցից մյուսը՝ այնուամենայնիվ չի կարողանում հասկանալ նրա դեպրեսիայի պատճառը: Հակառակը՝ հայտնվելով նոր միջավայրում՝ երեխան ավելի ինքնամփոփ է դառնում, ենթարկվում հասակակիցների ծաղրին ու նվաստացմանը… Եվ միայն հոգեբույժին դիմելուց հետո է պարզվում իրական պատճառը. բարձրդասարանցիները ենթարկել էին այդ երեխային սեքսուալ (օրալ) բռնության: Թե ինչպե՞ս կվարվի նման դեպքում ծնողը՝ կախված է մեր մտածելակերպից, ինչպես նաև ընտանիքի սոցիալական կարգավիճակից: Համենայն դեպս, բռնության մասին գործերի մեծ մասը մեզանում երբեք չի հասնում մինչև ոստիկանություն: Ինձ հայտնի է մի դեպք, երբ բռնարարք կատարողի հայրը զոհից ազատվելու համար պատկառելի գումար է վճարել, որպեսզի տուժողի ընտանիքը հնարավորություն ունենա հեռանալ երկրից... Ու ինչն է օրինաչափ. բռնություն գործադրողը միշտ գիտի ինչ զոհ ընտրել. որպես կանոն՝ դրանք հասարակության սոցիալապես անապահով խավի մարդիկ են: Նման իրավիճակներում մեզանում բացակայում են մեխանիզմները, այդ թվում նաև՝ օրենսդրական:

Ընդհանուր առմամբ, երեխաների նկատմամբ բռնության խնդիրը կարելի է համեմատել սառցալեռան հետ. երևում է միայն դրա գագաթը...

Զրուցեց Կարի Ամիրխանյանը

***

Հ.Գ. - Անգլերեն «բուլինգ» բառը (bullying, bully բառից՝ խուլիգան, կռվարար, բռի) նշանակում է վախեցնել, ֆիզիկական կամ հոգեբանական տեռորի ենթարկել: Նույնիսկ արտաքուստ համեմատաբար անվնաս դպրոցական բուլինգն ունի վտանգավոր երկարատև հոգեբանական հետևանքներ: Բուլինգի դրսևորումները տեղ են գտնում բանակում՝ դեդովշչինայի տեսքով և քրեակատարողական հիմնարկներում:

Երբ երեխան ընտանեկան բռնության ականատես է դառնում

ՄԱԲՀ-ի «Ընդդեմ գենդերային բռնության» ծրագրի շրջանակներում Հայաստանում անցկացված համահանրապետական հարցման տվյալներով.

***

Հարցմանը մասնակցած կանանց 6%-ը մանուկ հասակում ականատես է եղել իր մոր հանդեպ ֆիզիկական բռնության, 7,9%-ը լսել է դրա մասին, իսկ 9,2%-ը ենթարկվել է հարկադիր սեռական հարաբերությունների մանուկ հասակում:

***

Այն տղամարդիկ, ում մայրերին ծեծել են ամուսինները, 10 անգամ ավելի հակված են բռնություն գործադրել իրենց կանանց նկատմամբ (43,6%), քան նրանք, ում մայրերը ծեծի չեն ենթարկվել (4,5%):

***

Բռնությունն անբարենպաստ ազդեցություն ունի այն երեխաների հոգեկան առողջության վրա, ում մայրերը բռնության են ենթարկվել: Հաճախակի մղձավանջներ ունեցող, ագրեսիվ և գիշերամիզությամբ տառապող երեխաների տոկոսը համապատասխանաբար գրեթե 2, 3 և 1,5 անգամ բարձր է այն կանանց երեխաների շրջանում, ովքեր ենթարկվել են բռնության:

Հարցազրույցին մասնակցել է 15-59 տարեկան 2763 կին:

ՕԳՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԸ

Յուրաքանչյուր երեխա ընտանիքի կարիք ունի

Թեժ գիծ՝ 0800-61111 և 24-15-80 Երեխաների իրավունքների պաշտպանության կենտրոնի շուրջօրյա ծառայության այս հեռախոսահամարները, ինչպես նաև Երևանի Կ. Ուլնեցու 64 հասցեն գիտեն ոստիկանության բոլոր բաժանմունքներում, անչափահասների հիմնախնդիրներով զբաղվող պետական և հասարակական կազմակերպություններում:
Այս ծառայությունը գործում է Հայ օգնության ֆոնդի հենքի վրա:

Հայ օգնության ֆոնդի Երեխաների աջակցության կենտրոնն արդեն 10 տարվա պատմություն ունի: Այս տարիների ընթացքում կենտրոնն օգնել է տարբեր դժվարին իրավիճակներում հայտնված մոտ 6000 երեխաների՝ փողոցում հայտնված, մուրացկանությամբ զբաղվող, տունը լքած…

ՀՕՖ-ի այս կենտրոնը ժամանակավոր կացարան է հանդիսանում այս երեխաների համար, որտեղ նրանք ստանում են բժշկական, սոցիալ-հոգեբանական, անհրաժեշտության դեպքում նաև՝ իրավաբանական աջակցություն: Կենտրոնն աջակցություն է տրամադրում 3-18 տարեկան երեխաների:

«Դրա համար մենք հատուկ ստեղծեցինք թեժ գիծ: Օրական ստանում ենք 5-20 զանգ, ԶԼՄ-ներով մեր մասին լրացուցիչ տեղեկատվության դեպքում զանգերը անհամեմատ շատանում են»,- ասում է ՀՕՖ-ի Երեխաների աջակցության կենտրոնի տնօրեն **Միրա Անտոնյանը:**

Կենտրոնը բազմաթիվ գործընկերներ ունի, այդ թվում նաև՝ ոստիկանությունը.

- Ոստիկանները որևէ ուղղակի առնչություն չունեն երեխաների հետ, նրանք աշխատանքի պրոցեսին չեն խառնվում, միայն եթե մենք ենք խնդրում: Հատկապես օգնում են ծնողին հայտնաբերելու գործում: Օրինակ՝ մեզ մոտ հիմա գտնվում է 4 տարեկան երեխա: Երբ նրան մուրացկանության համար բերեցին մեր կենտրոն, պարզվեց, որ նա 2 տարեկան քույր էլ ունի: Ապրելիս են եղել սարսափելի վատ պայմաններում, մեզ լուրեր են հասել նաև, որ մայրը երեխաներ է ունենում և վաճառում: Հիմա մորը և այդ երեխային գտնելու հարցում մեզ օգնում է ոստիկանությունը:

Իսկ ի՞նչ է անում կենտրոնը, եթե նախկինում աջակցություն ստացած երեխաների մոտ նույն խնդիրները կրկնվում են: Միրա Անտոնյանը հիշեց կոնկրետ դեպքեր, երբ երեխաների տուն վերադառնալուց հետո ծնողներն առաջվա պես նրա նկատմամբ բռնություն էին գործադրում… Նման կրիտիկական իրավիճակը պահանջում էր կազմակերպության անհապաղ միջամտությունը, երեխային հետ վերադարձնել և պահել՝ մինչև նրանց հետագա ճակատագրի օպտիմալ և լավագույն լուծումը գտնելը: Փորձում էինք գտնել երեխայի բարեկամին, հարազատին, ով խնամակալությունն իր վրա կվերցներ, բայց միշտ չէ, որ հաջողվում էր,- խոստովանում է տիկին Անտոնյանը և նշում, որ այդ երեխաներին ստիպված ուղարկում էին մանկատներ:

- Մինչդեռ որքան էլ այսօր բարեկեցիկ պայմաններ են ստեղծված մեր մանկատներում, այն խմբային կյանքի ոճ է, երեխան սովորում է որբության ֆենոմենին, չի ունենում ընտանիքի մոդել, ինչը հետագայում նրան շատ անհրաժեշտ է իր սեփական ընտանիքը կառուցելու համար:

Այս տեսանկյունից չափազանց հետաքրքիր է կենտրոնի և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ համատեղ իրականացված փորձնական մի ծրագիր:

- Փորձեցինք կիրառել խնամատար ընտանիքի մոդել: Ուսումնասիրեցինք համաշխարհային փորձը…Գոյություն ունի IFCO (The International Foster Care organization) միջազգային կազմակերպություն, մասնակցեցինք նրանց սեմինարներին, Every child կազմակերպությունը փորձագետ ուղարկեց մեզ համար, մոտ երկու տարի սովորեցինք, պատրաստվեցինք, հետո նոր սկսեցինք մեր աշխատանքները,- նշում է Միրա Անտոնյանը:

Ծրագիրն իրականացնելու համար ընտրեցին Գեղարքունիքի և Լոռու մարզերը: Հատուկ հանդիպումներ կազմակերպվեցին բնակչության հետ, արդյունքում՝ կենտրոնն ստացավ 300-ից ավելի խնամատար ընտանիք դառնալու առաջարկներ, որոնցից ընտրվեցին 30-ը:

- Սրանք այն ընտանիքներն էին, որոնք ունեին երեխաներ, կայուն եկամուտ: Խնամատարության համար տրվող 45 հազար գումարը նրանց համար լրացուցիչ եկամտի աղբյուր չէր: Կարևորը երեխային օգնելու նրանց ցանկությունն էր: Սակայն համաշխարհային փորձը նաև ցույց է տվել, որ այդ գումարը, թեկուզև խորհրդանշական, անհրաժեշտ է, քանի որ մենք չէինք ցանկանում, որ երեխայի մուտքն այս ընտանիք ֆինանսական խնդիրներ առաջացնի ընտանիքի համար:

Այսօր 30 երեխա է ապրում խնամատար ընտանիքներում: Դրանք գտնվում են կենտրոնի ամենօրյա ուշադրության կենտրոնում: Սակայն կենտրոնը շարունակում է աշխատանքներ տանել երեխաների կենսաբանական ծնողների հետ՝ փորձելով փոխել իրավիճակը այդ ընտանիքներում.

- Մենք ունենք տասը երեխա, ովքեր վերադարձել են իրենց հիմնական ընտանիք, և համարում ենք դա մեր ծրագրի հաղթանակներից մեկը, քանի որ, ի վերջո, մեր վերջնական նպատակն է, որ երեխան ապրի իր ծնողների հետ: Իսկ խնամատար ընտանիքը կարծես «տատիկ-պապիկի» մոդելն է, երբ երեխան ժամանակավորապես ապրում է նրանց տանը:

Միրա Անտոնյանը նշում է, որ ծրագրի անհրաժեշտությունն այսօր էլ կա, և հուսով է, որ այն շարունակական կլինի:

Զրուցեց Լիլիթ Քոչինյանը

ԲԼԻՑ ՀԱՐՑՈՒՄ

«Եթե քեզ խելոք պահես, չի ծեծի»…

Մանկավարժներն ապտակում են, ծնողները՝ արդարացնում

Մայրաքաղաքի 12-15 տարեկան 23 աշակերտների շրջանում անցկացրած մեր բլից հարցումը ցույց տվեց, որ երեխաները հաճախ են ֆիզիկական բռնության ենթարկվում դպրոցում, ընդ որում, որոշ դեպքերում ծնողները տեղյակ են լինում այդ մասին, բայց ոչ միշտ են քայլեր ձեռնարկում:

«Մի անգամ ընկերներով կազմակերպել էինք, որ բոլորով փախնենք դասից: Դպրոցի բակում ուսմասվարը (կին) մեզ տեսավ ու հետ բերեց դասարան, հետո երեք կազմակերպիչներիս ծեծեց: Ես մամայիս պատմեցի, ինքն ասեց՝ լավ ա արել, չփախնեիք, չէր ծեծի»,- պատմում է 8-րդ դասարանի աշակերտ Վարդանը:

14-ամյա Արմանը նախընտրում է, որ վատ արարքների համար իրեն ապտակեն դպրոցում, քան թե ծնողին տեղեկացնեն իր վարքի մասին: *«Մամաս որ իմացավ, ինձ ավելի վատ կպատժի»,-* ասում է նա:

9-րդ դասարանցի Ստեփանի խոսքով՝ իրենց դպրոցում հաճախ են աշակերտներին դաստիարակչական ապտակ հասցնում, բայց միայն ըստ անհրաժեշտության: *«Ճիշտը որ ասեմ՝ դասատուներն էլ չեն դիմանում մեր ձեռը, մեզ շատ անկարգ ենք պահում, ուրիշ ձև չունեն»,-* ասում է 15-ամյա տղան:

«Մեր դասատուներից մեկը (տղամարդ) ուժեղ կտացնում ա գլխիս, եթե խոսում եմ դասի ժամին: Ինքը սաղ դպրոցում հայտնի ա որպես կտացնող ուսուցիչ»,- ժպիտով պատմում է Շենգավիթ վարչական շրջանի դպրոցներից մեկում սովորող 13-ամյա Նարեկը:

«Մեր դասարանի Դավիթին ֆիզկուլտուրայի դասատուն (տղամարդ) ընենց էր ծեծել, որ բոլորս վախեցել էինք: Ես մամայիս ասեցի, որ վախում եմ էդ դասին գնամ, ինքն ասեց, որ Դավիթը խուժան ա, դրա համար ա դասատուն ծեծել, եթե քեզ խելոք պահես, չի ծեծի»,- պատմում է Կենտրոն վարչական շրջանի աշակերտ, 8-րդ դասարանցի Հռիփսիմեն:

«Ես դասատուներին զգուշացրել եմ, որ եթե ինձ խփեն, ես պատասխան եմ տալու, որովհետև ոչ մեկին իմ վրա ձեռ բարձրացնելու իրավունք չեմ տվել»,- ասում է 15-ամյա Ռաֆայելը, ով համադասարանցիների առջև ապտակ ստանալը անպատվաբեր է համարում:

«Մեր կենսաբանության դասատուն (կին) կատակով կմճտում ա մեզ, բայց իմ կարծիքով՝ դա բռնություն չի, ոնց որ մեր ուշադրությունն ա հրավիրում դասի վրա, որ չշեղվենք»,- կարծում է 15-ամյա Մարիամը:

Մեզ հետ զրուցած երեք ծնողներից երկուսը պատրաստ էին արդարացնելմանկավարժների կողմից գործած բռնությունները. *«Չեմ ասում, թե միշտ պիտի խփեն էրեխուն, բայց աշակերտը պիտի վախենա դասատուից, թե չէ չի լսի դասը, մեր վախտ էլ էր էդպես»,-* կարծում է 15-ամյա Մարտինի հայրը՝ Գրիգորը:

Երկու դպրոցական տղաների մայր Գայանեն նշեց, որ իր երեխաների նկատմամբ դպրոցում երբեք ֆիզիկական բռնություն չեն կիրառել. *«Իմ երեխաներին մատով չեն դիպել, որովհետև նրանք խելոք են իրենց պահում, բայց շատ աշակերտներ այնքան լկտի վարք ունեն, որ ուսուցիչը ստիպված ապտակ է հասցնում»,-* ասում է նա:

«Երբ աղջկաս 5-րդ դասարանում նոր դպրոց էի տեղափոխում, լսել էի, որ այդտեղ մի անգամ ծեծկռտուք էր եղել աշակերտի ու ուսուցչի միջև, դրա համար հենց առաջին օրը տնօրենին զգուշացրի, որ չեմ հանդուրժի երեխայիս նկատմամբ որևէ բռնություն, ու մինչ օրս նման դեպք չի եղել»,- ասում է արդեն 8-րդ դասարանցի Սոնայի մայրը՝ տիկին Կարինեն:

Արման Ղարիբյան

ՁԱՅՆ ԲԱԶՄԱՑ

«Հայրական ապտակի» առանձնահատկությունները դպրոցում

«Ռազմագիտության ուսուցիչը դաս պատասխանողին խփում է ցուցափայտով, քաշում տղաների ականջներից և ստիպում իջնել-բարձրանալ 10 անգամ»: Այսպիսի դաս եղել է Լոռու մարզի դպրոցներից մեկում, երբ «Հայաստանի հելսինկյան կոմիտե» իրավապաշտպան կազմակերպությունը մոնիթորինգ էր անցկացնում Հայաստանի 7 մարզերի և Երևան քաղաքի 35 հանրակրթական դպրոցներում աշակերտների հանդեպ կիրառվող բռնության իրական պատկերը ստանալու համար:

- Արդյունքները մեզ համար ապշեցուցիչ էին,- ասում է Հայաստանի Հելսինկյան կոմիտեի նախագահ Ավետիք Իշխանյանը: *- Պարզվեց, որ դպրոցներում բավականին տարածված է բռնությունը երեխաների նկատմամբ, և դա կարծես թե համարվում է սովորական երևույթ և՛ ծնողների, և՛ ուսուցիչների, և՛ տնօրինության կողմից: Իսկ երեխաներն էլ առանձնապես չեն դժգոհում, մտածելով հենց այդպես էլ պետք է լինի:*

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ դիտարկվող բոլոր դպրոցներում էլ կիրառվել են բռնության այս կամ այն տեսակը: Սակայն տնօրենները հիմնականում բացառում են բռնության դրսևորումները իրենց դպրոցներում՝ միաժամանակ նշելով, որ «հայրական ապտակը» երբեք չի կարող բռնություն դիտվել, նույնիսկ ավելին. *«շատ մեծ դաստիարակչական բնույթ ունի և արդյունավետ է»:*

Զարմանալի է ծնողների վերաբերմունքը այս հարցին. ահա երկու կարծիք. *«Ուսուցիչներն են, որ դիմանում են մեր երեխաներին»:* Այս մեկն էլ տղայի ծնողի կարծիքն է. *«Ուսուցիչները ոչ մի մեղք չունեն. եթե խիստ չլինեն և պատիժներ չկիրառեն, ապա այսօրվա երեխաների առաջն առնել չի լինի»:*

Հարցվածներից և ոչ մեկը չի խոսել այն մասին, որ հանրակրթական դպրոցներում խախտվում են աշակերտի իրավունքները, դրանց մասին, ի դեպ, գիտի հարցվածների 54 %-ը: Իսկ ուսուցիչներից մեկը պատասխանել է, որ *«Լավ կլինի պարզել՝ ո՞ւմ իրավունքներն են ավելի շատ խախտվում՝աշակերտի՞, թե՞ ուսուցչի»:*

Ոչ մի դպրոցում չեն հայտնաբերվել ուսուցիչների և աշակերտների իրավունքների և պարտականությունների մասին որևէ փաստաթուղթ, և հարցված աշակերտների մի մասը հաճախ շփոթել է իրենց իրավունքներն ու պարտականությունները:

Ահա պատժի ևս մեկ օրինակ. *«Ուսուցիչներից մեկը դասը լավ չսովորած աշակերտի ճակատին «2» է գրում և, ձեռքից բռնած, շրջում բոլոր դասարաններով, որպեսզի հնարավորինս շատ աշակերտներ տեսնեն»:*

- Մոնիթորինգի արդյունքում պարզվեց, որ այդ մեթոդն իրականացվում է ամբողջ հանրապետության տարածքում և համարվում է դաստիարակչական մեթոդ: Եվ ոչ մի դժգոհություն չի առաջացնում և ոչ մեկի կողմից չի համարվում բացասական երևույթ,- ասում է Ավետիք Իշխանյանը:

2009-2010-ին ուսումնասիրություններ են կատարվել նաև գիշերօթիկ և հատուկ ուսումնական հաստատություններում: 19 գիշերօթիկ դպրոցներից միայն մեկում բռնության դեպքեր չեն հայտնաբերվել:

Դպրոցներից մեկի տնօրենն էլ ասել է, որ չհավատան երեխաներին, քանի որ նրանք հակված են չափազանցնելու և սուտ են խոսում: *«Ուսուցիչը մի անգամ աշակերտի գլխին մատանիով հարվածել էր: Երեխայի գլուխն այտուցվել էր, սառը դրեցինք՝ անցավ: Ոչ ոքի չասեցինք, թե չէ ավելի կծեծեին»,-* պատմել են գիշերօթիկի սաները:

- Բնականաբար, այս երեխաներն ավելի խոցելի են,- ասում է Ավետիք Իշխանյանը: - Այս հաստատություններում պետք է մշտադիտարկում անցկացնել, ինչն էլ բարեբախտաբար ԿԳ նախարարությունը նախաձեռնեց՝ ստեղծելով մշտադիտարկման հասարակական խորհուրդը:

Սակայն դպրոցներից բռնությունը վերացնելու համար, իրավապաշտպանի կարծիքով, պետք է կիրառել համալիր մոտեցում՝ սկսած բուհերից, որոնք մանկավարժներ են կրթում: *- Դրան զուգահեռ պետք է լուծվի պատժի հարցը, երեխաների նկատմամբ բռնություն գործողը պետք է իմանա, որ ցանկացած բռնության համար պատժվելու է…*

Կարինե Պետրոսյան

«Իսկ եթե դուք ուսուցիչ լինեիք, կպատժեի՞ք»…

«Դպրոցում երբևէ ձեզ պատժե՞լ են» հարցին աշակերտների 39%-ը տվել է դրական պատասխան. նրանց 10%-ին պատժել է տնօրենը, 38-ին՝ ուսուցիչը, 7%-ին՝ դռնապանը: Աշակերտների նկատմամբ կիրառված պատժամիջոցներից ամենահաճախ կիրառվողը վիրավորանքն է՝ 28%, հետո՝ անբավարար գնահատականը՝ 25%, 14%-ին էլ անկյուն են կանգնեցնում: Հարցվածներից 10%-ին ապտակել են, իսկ 7%-ին՝ ծեծել:

Այս ամենի մեջ կա հետաքրքիր մեկ փաստ. այն հարցին, թե արդյոք աշակերտները, եթե իրենք ուսուցիչ լինեին, կպատժեի՞ն իրենց աշակերտներին, 16%-ը պատասխանել է՝ այո՛:

Հարցմանը մասնակցել են 5-10-րդ դասարանցի 1785 աշակերտներ:

Թողարկումը հրատարակվել է Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի եւ ԵԽ տեղեկատվական գրասենյակի աջակցությամբ
Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
Շնավորումը՝ Վահե Դիոնեսյանի
Տպաքանակը՝ 5000